ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

----------2010 թվականի N ------- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի՝ <<Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ ՆՀ-37-Ն հրամանագրի 2-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գործունեության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյան

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ կառավարության ..... թ.

-----ի _ N ____որոշման

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ազգային անվտանգության և բարեկեցության ապահովման հիմնական գործոններից է արդյունավետ և մրցունակ գիտակրթական քաղաքականությունը: Սույն ծրագիրը ուղղված է «Հայաստանի Հանրապետություն ազգային անվտանգության ռազմավարության» հետևյալ նպատակադրումների իրագործմանը.

1) Հայաստանի մտավոր ներուժի զորացմանը միտված հեռանկարային պետական քաղաքականության իրականացումը,
2) գիտակրթական համակարգի վերակառուցումն ու համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին,
3) ուսուցման առաջատար տեխնոլոգիաների ներդրումը,
4) գիտական արտադրանքի ապրանքայնացումը,
5) գիտական ներուժի ներգրավումը կենսագործունեության բոլոր ոլորտներում:

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

2. Հայաստանի կրթության և գիտության զարգացման գերակայությունները պայմանավորված են ազգային անվտանգության ապահովման հետևյալ հիմնական թիրախների հաղթահարման մարտահրավերներով.

1) կայուն տնտեսական աճի ապահովում,

2) միջազգային և տարածաշրջանային համագործակցություն,

3) անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում,

4) բարեկեցության ապահովում և աղքատության հաղթահարում,

5) հայապահպանություն:

3. Հայաստանի շարունակական զարգացման կայուն տեմպերի ապահովման անհրաժեշտությունը թելադրում է գիտելիքահենք տնտեսության և հասարակության ձևավորում: Կրթությունը և գիտությունը, որպես կադրային ներուժի ձևավորման հիմնական գործոն, կենտրոնական դերակատարում ունեն այս խնդրում: Գիտակրթական համակարգն է բարձր մտավոր և ստեղծագործական ունակություններով օժտված, միջազգային մակարդակում մրցունակ գիտության և բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրերի պատրաստման երաշխավորը:

4. Հայաստանի գիտակրթական համակարգն արմատական բարեփոխումների կարիք ունի. այն ռեսուրսների նպատակային ուղղորդման միջոցով պետք է ձևավորի տնտեսության և հասարակության պահանջներին համահունչ կրթության ճկուն և արդյունավետ մեխանիզմներ:

5. Գտնվելով մշակույթների և քաղաքակրթությունների հատման սահմանագծում, Հայաստանն ու հայությունը պատմականորեն ձեռք են բերել կարևորագույն հատկանիշներ՝ դարեր շարունակ յուրօրինակ «կամրջի» դեր խաղալով տարբեր քաղաքակրթությունների միջև : Այն այսօր ոչ միայն չի կորցրել իր արդիականությունը, այլև կարող է դառնալ մեր պետության ու հասարակության զարգացման կարևորագույն ազդակ՝ ապահովելով մեր ուրույն տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում:

6. Միաժամանակ, գտնվելով մի տարածաշրջանում, որտեղ խաչվում են տարբեր աշխարհաքաղաքական ուժերի շահեր, Հայաստանը որդեգրել է միջազգային ակտիվ ներգրավման ռազմավարություն: Սա մի կողմից ենթադրում է կրթության բնագավառի ակտիվ մասնակցությունը գլոբալ և տարածաշրջանային գիտակրթական գործընթացներին, մյուս կողմից՝ խնդիր է առաջադրում կրթությանը՝ զարգացնել նման մասնակցության ներուժը, ապահովել լեզվական և միջմշակութային շփումների դժվարությունների հաղթահարումը:

7. Ամրագրելով կրթական և գիտական եվրոպական ստանդարտներ և ապահովելով բարձրորակ կրթություն, Հայաստանի գիտակրթական համակարգը կարող է բավականին գրավիչ դառնալ հարևան երկրների համար ինչպես կրթական ծառայությունների ձեռքբերման, այնպես էլ կրթության ոլորտում ներդրումների առումով: Նման դերակատարում ունենալու ձգտում ունեն նաև տարածաշրջանի մեզ հարևան որոշ երկրներ, որոնք նույնպես հռչակել են եվրոինտեգրման քաղաքականություն և ակտիվորեն քայլեր են ձեռնարկում իրենց գիտակրթական համակարգերը զարգացնելու եվրոպական չափանիշներին համապատասխան: Այս խնդրում ունենալով որոշակի մրցակցային առավելություններ, Հայաստանը պետք է որդեգրի առավել ինտենսիվ բարեփոխումների քաղաքականություն՝ հատկապես մասնագիտական կրթության ոլորտում:

8. Հայաստանի Հանրապետությունն անցնում է պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման դժվարին ճանապարհ: Այս գործընթացում հսկայական է նոր սերնդի դաստիարակության կարևորությունը: Կրթության համակարգի խնդիրն է ակտիվ քաղաքացու ձևավորումը, որը կրում է ազգային արժեքները, դրանք համադրելով քաղաքացիական հասարակության առաջադիմական մշակույթի հետ: Հայաստանը ստիպված է լուծել մի շարք սոցիալական խնդիրներ՝ նպատակ ունենալով ապահովել քաղաքացիների հարատև բարեկեցությունը: Առավել առաջնային է հանդիսանում աղքատության հաղթահարումը, որտեղ կրթությունը դիտարկվում է հիմնական գերակայությունների շարքում: Նկատի ունենալով Հայաստանի տնտեսական զարգացման միտումները, այս բնագավառում ևս առաջնային է դառնում որակյալ մասնագիտական կրթության հնարավորությունների ընդլայնումը՝ սոցիալական անհավասարությունն ու տարածքային անհամաչափ զարգացումը մեղմելու հրամայականով:

9. Հայաստանի կարևոր հիմնախնդիրների շարքին է դասվում հայապահպանության խնդիրը: ՈՒնենալով աշխարհասփյուռ հայություն, Հայաստանը ջանում է ներգրավել Սփյուռքի առկա ներուժը, միաժամանակ ստանձնելով պարտականություն՝ աջակցելու նրան դիմակայելու ուծացմանը և լեզվամշակութային ինքնության կորստի կանխմանը: Այս համատեքստում

Հայաստանի Հանրապետության գիտակրթական համակարգը կոչված է համակողմանիորեն սատարելու սփյուռքահայ կրթօջախների գործունեությանը, ապահովելու արդյունավետ համագործակցություն գիտակրթական ոլորտում, դրանով իսկ պայմաններ ձևավորելով համահայկական ներուժի համախմբման և ռացիոնալ օգտագործման նպատակային խնդիրների լուծման համար:

10. Այսպիսով, պետության զարգացման և ազգային անվտանգության ապահովման համատեքստում մրցունակ գիտակրթական քաղաքականության իրականացման մարտահրավերը պահանջում է Հայաստանի գիտակրթական բնագավառի առաջանցիկ զարգացում, որն ուղղված է կրթության որակի և մատչելիության բարձրացմանը և գիտության ու տնտեսության արդյունավետ կապի ապահովմանը:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Հայաստանի գիտակրթական համակարգի գլխավոր նպատակներն են համակարգի արդիականացումը և կրթության մատչելիության ապահովումը: Սույն նպատակների իրականացման համար առաջնահերթ են.

1) Հայաստանի մտավոր ներուժի զորացմանը միտված հեռանկարային պետական քաղաքականության իրականացումը,

2) գիտակրթական համակարգի վերակառուցումն ու համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին,

3) ուսուցման առաջատար տեխնոլոգիաների ներդրումը,

4) գիտական արտադրանքի ապրանքայնացումը և գիտական ներուժի ներգրավումը կենսագործունեության բոլոր ոլորտներում:

12. Հեռանկարային գիտակրթական քաղաքականության իրականացումը.

1) Հեռանկարային գիտակրթական քաղաքականության իրականացումը առաջին հերթին պայմանավորված է գիտության և կրթության կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմամբ: Այն նախատեսում է.

ա. կառավարման մարմինների կառուցվածքային և ֆունկցիոնալ օպտիմալացում,

բ. կառավարման մարմինների մասնագիտական ներուժի հզորացում, հատկապես՝ ռազմավարական պլանավորման և բարեփոխումներն առաջնորդելու ոլորտներում,

գ. որոշումների կայացման արդյունավետ՝ արդյունքի և գիտական հետազոտությունների վրա հիմնված, մասնակցային աշխատառճի որդեգրում,

դ. գործունեության հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում.

2) Միջազգային տնտեսական, հասարակական, մասնագիտական և այլ ցանցերում մասնակցությունը կարևոր պայման է շարունակաբար նորացվող գիտելիքի համաշխարհային շտեմարանից օգտվելու, առկա գիտելիքը, փորձը արագորեն տեղայնացնելու, իսկ տեղական գիտելիքն ու նորարարությունը միջազգայնացնելու համար: Միջազգային ցանցերում մասնակցության անհրաժեշտությունը կնպաստի Հայաստանի կրթության որակի և վարկանիշի, ինչպես նաև ընդհանուր մրցունակության բարձրացմանը: Այս տեսանկյունից առաջ-նային է համարվում.

ա. անդամակցումը միջազգային, հատկապես՝ եվրոպական, գիտակրթական կազմակերպություններին,

բ. մասնակցությունը միջազգային գնահատումների, գիտական հետազոտությունների, կրթական ծրագրերի,

գ. սովորողների և հաստատությունների միջազգային համագործակցության կարողությունների զարգացումը,

դ. Սփյուռքի գիտական ներուժի ներգրավումը,

ե. մասնագետների նպատակային պատրաստումը արտասահմանյան բարձրակարգ կրթօջախներում (նպատակային ուսուցում, փոխանակման ծրագրեր).

3) Մտավոր ներուժի զարգացմանը միտված քաղաքականությունը ենթադրում է այնպիսի ռազմավարական մոտեցումների որդեգրում, որոնք ապահովում են բարեփոխումների առավել նպատակայնություն և արդյունավետություն,

նպաստավոր պայմաններ են ստեղծում նորարարական զարգացումների համար: Այս առումով նախարարության գործունեությունն ուղղված է լինելու.

ա. առաջավոր գիտակրթական կենտրոնների ձևավորմանն ու զարգացմանը,

բ. բացառիկ նվաճումները խթանող ներդրումնային քաղաքականության իրականացմանը,

գ. նորարարական մշակումներին ուղղված գիտական հետազոտությունների ծավալի մեծացմանը,

դ. գիտական կադրերի երիտասարդացմանը:

13. Գիտակրթական համակարգի վերակառուցումը պահանջում է արդիականացնել կրթության բովանդակությունը՝ ապահովելով դրա համապատասխանությունը արդի պահանջներին: Հայաստանի կրթության բնագավառում ներկայումս ընթացող բարեփոխումներն ընդգրկում են կրթության բոլոր մակարդակները: Դրանք միտված են կրթության որակի և մատչելիության ապահովմանը: Բարեփոխումների հետագա փուլը նախատեսում է.

1) բարձրագույն կրթության համակարգի վերակառուցում բոլոնյան գործընթացի սկզբունքներին և չափանիշներին համապատասխան,

2) նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի համապատասխանեցում եվրոպական չափանիշներին՝ համաձայն կոպենհագենյան գործընթացի սկզբունքներին,

3) գիտակրթական հաստատությունների և տնտեսության արդյունավետ երկխոսության և համագործակցության խթանում, գործուն մեխանիզմների մշակում և ներդնում,

4) մասնագիտական կրթության մատչելիության բարձրացում և հավասար հնարավորությունների ստեղծում :

14. ՈՒսուցման առաջատար տեխնոլոգիաների ներդրման ոլորտում առաջնահերթություններն են.

1) կրթության բնագավառում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումը,

2) մասնագիտական կրթության ոլորտում համընդհանուր անցումն արդյունքահեն չափանիշների և կրեդիտային համակարգի,

3) սովորողների ներգրավումը գիտական հետազոտություններում:

15. Հայաստանի Հանրապետության համար կարևորագույն ռազմավարական խնդիր համարելով գիտության զարգացումը և տեխնոլոգիական առաջընթացը, անհրաժեշտ է ապահովել այդ ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության արդյունավետության բարձրացումը, որը կապահովի Հայաստանի տնտեսության վերընթաց զարգացում: Գիտության ոլորտում բարեփոխումների հիմնական նպատակն է գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումը, որում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա պետությունը: Առաջիկա տարիների համար գիտության ոլորտի բարեփոխումների իրականացման շրջանակներում, ելնելով Հայաստանի Հանրապետության անվտանգության ռազմավարության սկզբունքներից, կարևորվում են այն միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են Հայաստանի մտավոր ներուժի զարգացմանը միտված հեռանկարային պետական քաղաքականության իրականացմանը, գիտակրթական համակարգի վերակառուցմանը և համապատասխանեցմանը եվրոպական չափանիշներին:

I I I. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Հ/հ	Միջոցառումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարման ժամկետները	Ֆինանսական աղբյուրները	Կատարողը
1	2	3	4	5	6
1.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կադրային և ինստիտուցիոնալ զարգացման կարողությունների ուսումնասիրում, ռացիոնալացում	Կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում	2011թ.	Դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
2.	Բարեփոխումներն առաջնորդող թիմի ձևավորում և վերապատրաստումների իրականացում `ծրագրերի կառավարման, ֆինանսական վերլուծության, ռեսուրսների մոբիլիզացման և դոնորների հետ տարվող աշխատանքների համակարգման ոլորտներում	Նախարարության՝ բարեփոխումներն առաջնորդելու մասնագիտական ներուժի զարգացում	2011-2012թթ.	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
3.	Զարգացման ծրագրի մոնիտորինգի մեխանիզմների, ցուցանիշների համակազմի, արդյունքների հանրայնացման համակարգի մշակում և ներդնում	Հաշվետվողականության և թափանցիկության ապահովում	2010թ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
4.	Նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների	Կրթական քաղաքականության իրականացման ապահովում	2011-2012թթ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

	ուսումնադաստիարակչական գործունեության նկատմամբ պետական վերահսկողության՝ միջազգային չափանիշներին համապատասխան մեխանիզմների մշակում և ներդրում				
5.	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի զարգացում և ամբողջականացում	Կրթության ոլորտի վարչական վիճակագրության բարելավում	2010-2012թթ. Ըստ տարիների համակարգում կներառվեն կրթական բոլոր աստիճանները	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
6.	ՄԿՈՒ համակարգի բարեփոխումներ կոպենհագենյան հռչակագրի սկզբունքներին համապատասխան	ՄԿՈՒ համակարգի ինտեգրում Եվրոպական կրթական տարածքին	2010-2015թ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
7.	Արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների (խմբերի) մասնակցության ապահովում միջազգային օլիմպիադաներին, ստուգատեսներին և մրցույթներին	Կրթական նվաճումների խրախուսում	2010-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
8.	Սփյուռքահայ մասնագետների մասին տեղեկատվական բազայի ստեղծում, համագործակցությունը խրախուսող մեխանիզմների ներդրում	Սփյուռքահայ մասնագետների ներուժի ներգրավում	2010-2011թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
9.	Բարձրակարգ կրթական նվաճումներին միտված, նորարարական ծրագրերի մրցույթի կարգի մշակում և ներդնում	Նվաճումներին միտված քաղաքականության իրականացում	2012թ.	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

10.	Սովորողների ստեղծագործական, հետազոտական և նորարարական աշխատանքների խրախուսման մեխանիզմների ներդնում	Կրթական նվաճումների խրախուսում	2011թ.	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
11.	Միջին և բարձրագույն մասնագիտական, հետբուհական կրթության համալիր վերակառուցման ռազմավարության, միջոցառումների պլանի և ժամանակացույցի մշակում	Մասնագիտական կրթության համալիր բարեփոխում	2011թ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
12.	Եվրոպական որակավորումների շրջանակին համապատասխան որակավորումների ազգային շրջանակի մշակում և ներդնում	Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին, Որակավորումների ազգային շրջանակի գործարկում	2010-2012թ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
13.	Որակի ապահովման ազգային համակարգի ձևավորում	Կրթության որակի ապահովում, Որակի ապահովման ազգային ծառայության գործարկում	2010-2015թ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
14.	Ուսումնական հաստատությունների արտաքին գնահատման միասնական չափանիշների մշակում և ներդնում	Կրթության որակի ապահովում	2011-2012թ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
15.	Կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդնում	Սովորողների շարժունության ապահովում	2010-2011թթ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպո	ՀՀ կրթության և գիտության նախարարու

				ւթյուններ	թյուն
16.	Անցում բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի	Կանոնակարգվող մասնագիտությունների համար վարույթային դաշտի ապահովում, անցում եռաստիճան համակարգին	2010-2012թթ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
17.	Բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթերի փոխճանաչման և համարժեքության ապահովում	Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին, ավարտական փաստաթղթի միասնական հավելվածի հաստատում	2010-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
18.	Գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի ներդրում, գնահատման համակարգի հայեցակարգի մշակում և հաստատում	Գնահատման միասնական չափանիշների և հավասար պայմանների ապահովում, անցում գնահատման նոր համակարգին	2010-2011թթ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
19.	Ըստ կրթական աստիճանների՝ մասնագիտական չափորոշիչների և մասնագետների (բակալավր, մագիստրոս և հետազոտող) պատրաստման մոդելների մշակում	Կրթության որակի ապահովում, մասնագիտական չափորոշիչների և մասնագետների պատրաստման մոդելների հաստատում	2010-2011թթ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
20.	Միջբուհական համատեղ կրթական	Շարժունության	2011-2015թթ.	ՀՀ պետական	ՀՀ կրթության

	ծրագրերի մշակում և իրականացում՝ ընդհանուր ծրագրային չափորոշիչներին համապատասխան և ընդհանուր որակավորման շնորհումով	ապահովում, համատեղ ծրագրերի իրականացում		բյուջե, դոնոր կազմակերպություններ	և գիտության նախարարություն
21.	Մանկավարժական կրթության, այդ թվում մանկավարժների շարունակական վերապատրաստման, մասնագիտական զարգացման համակարգի արդիականացման ծրագրի մշակում և իրականացում	Մանկավարժների պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորում	2010-2014թթ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
22.	Կրթական հաստատությունների համակարգչային ապահովվածության բարձրացում և ապահովում ինտերնետային կապով	Մեկ համակարգչին բաժին ընկնող սովորողների թիվը հասցնել 20-ի, դպրոցների 90%-ն ապահովել ինտերնետային կապով	2010-2015թթ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, մասնավոր ներդրումներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
23.	Ժամանակակից ուսումնական էլեկտրոնային ռեսուրսների մշակում	Բոլոր դպրոցներն ապահովել էլեկտրոնային ուսումնական ռեսուրսներով	2010-2015թթ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
24.	Գիտության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում	Գիտության առաջընթաց զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովում	2011-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
25.	Գիտական կենտրոնների, հետազոտական համալսարանների ստեղծում	Պետական գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում,	2011-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

		գիտաարտադրական համալիրների կազմակերպում			
26.	Գիտության ոլորտում բարեփոխումների համար օրենսդրական դաշտի բարելավում	Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման համար օրենսդրական հենքի ապահովում	2011-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
27.	Գիտության հիմնադրամի ստեղծում	Գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, համաֆինանսավորման մեխանիզմի ներդրում	2011թ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
28.	Գիտության ոլորտի զարգացման 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի մշակում	Գիտության առաջընթաց զարգացման ապահովման համար ծրագրային հենքի ստեղծում	2010թ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
29.	Միջազգային այլ կազմակերպությունների հետ գիտության ոլորտի համալիր բարեփոխումների օժանդակության համատեղ ծրագրերի իրականացում՝ համաֆինանսավորման սկզբունքով	Գիտական համագործակցության զարգացում, եվրոպական գիտական տարածք ինտեգրում	2011-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
30.	Գիտության ոլորտի ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում	Գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար անհրաժեշտ պայմանների	2011-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

		ապահովում			
31.	Միջազգային ճանաչում ունեցող գիտնականների համար հատուկ դրամաշնորհային համակարգի ստեղծում	Միջազգային ճանաչում ունեցող գիտնականների համար առավել բարձր վարձատրության պայմանների ապահովում	2012-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
32.	Գիտության երիտասարդացման լուծմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում	Գիտական ներուժի վերարտադրության ապահովում՝ տվյալ տարվա պետական բյուջեով գիտության ծախսերի համար նախատեսվող ընդհանուր գումարների սահմաններում	2011-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
33.	Միասնական գիտատեղեկատվական ցանցի զարգացմանը և գիտահրատարակչական գործունեության միջազգային չափանիշներին համապատասխանեցմանն ուղղված աշխատանքների կազմակերպում	Միասնական գիտատեղեկատվական ցանցի զարգացման, գիտահրատարակչական գործունեության միջազգային չափանիշներին համապատասխանեցման ապահովում	2011-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
34.	Գիտական արտադրանքի ապրանքայնացման արդյունավետ մեխանիզմների ստեղծում	Գիտական արտադրանքի արտաքին և ներքին շուկա դուրսբերման հնարավորությունների ստեղծում	2011-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

35.	Կիրառական բնույթի պետական նպատակային ծրագրերի մշակում և իրականացում	Գիտական արդյունքի առևտրայնացման պայմանների ապահովում	2011-2015թթ.	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
36.	Գիտական նորամուծությունների կենտրոնների ստեղծում : Գիտատեխնիկական ոլորտում վենչուրային ներդրումների մեխանիզմների ձևավորում	Գիտական նորամուծությունների ռիսկերի մեխանիզմների ապահովում	2012-2015թթ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ և ձեռնարկություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
37.	Հայագիտության բնագավառում հետազոտությունների խրախուսում, միջազգային համագործակցությունը խթանող մեխանիզմների ձևավորում : Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ստեղծում	Հայագիտության առաջընթաց զարգացման ապահովում	2012-2015թթ.	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Տեղեկանք-հիմնավորում

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման

<<Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գործունեության ծրագիրը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի՝ <<Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին>> ՆՀ-37-Ն հրամանագրի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2007 թվականի հուլիսի 10-ի՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված ծրագրերը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնելու ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 443-Ա որոշմամբ: